

## ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԶՈՒԼԵՏԱ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆԻ ՀԵՏ

### ՀԱՐՑԵՐԸ ՎԵՐՑՎԱԾ ԵՆ ԱՐՏԱՇԵՍ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆԻ FACEBOOK-Ի ԷԶԻՑ

ՀԱՐՑ – Ինչպե՞ս էր գրում Քալանթարյանը – փակվում էր սենյակում, ծխում, օրերով չէր խոսում, քննարկում էր պատմությունները մյուսների հետ, թե՞ այդ ամենը շատ ավելի հեշտ էր արվում:

Ձ. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ – Արտաշես Քալանթարյանը շատ կուզենար փակվել սենյակում, այո, ծխել և մտորել իր ընտրած թեմայի շուրջ: Բայց, ավաղ, նա այդ հնարավորությունը երբեք չունեցավ, որովհետև նա այդպես էլ իր առանձնասենյակը չունեցավ, որտեղ կկարողանար աշխատել: Մենք բազմանդամ ընտանիք էինք և ունեինք միայն երեք սենյականոց բնակարան:

Արտաշեսը հիմնականում ստեղծագործում էր գիշերը, երբ բոլորը քնած էին, և աշխատում էր խոհանոցում: Նա նույնիսկ մի փոքրիկ պատմվածք գրեց այդ թեմայով՝ „Իմ գրական խոհանոցը„: Նա սիրում էր իր գրած թեկուզ տասը տողը քննարկել ընտանիքի անդամների և հատկապես ինձ հետ: Լսում էր մեր կարծիքները և եթե հարմար էր գտնում, որոշ փոփոխություններ կատարում էր:

ՀԱՐՑ – Ինչու մեր օրերում չկան Քալանթարյաններ, ովքեր կարող էին նման պարզ ու մատչելի լեզվով հասկանալի դարձնել մարդկային ճակատագրերը:

Ձ. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ – Նա դեռ մանկուց շատ դժվարությունների և անարդարությունների էր հանդիպել և այդ իսկ պատճառով շատ լավ գիտեր կյանքը ու մարդկանց: Իսկ մտքերը պարզ և հակիրճ շարադրելու ունակությունը, կարծում եմ, նաև մասնագիտության հետ էր կապված. լրագրողը պետք է կարողանա քիչ, բայց ճշգրիտ բառերով շատ բան ասել: Արտաշեսի մոտ համադրվում էին գրողն ու լրագրողը:

ՀԱՐՑ – Ինչքանով կապ ունեն նրա գրածներն իր իրական կյանքի հետ:

Ձ. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ – Նրա համարյա բոլոր կերպարները վերցված են կյանքից և ունեն իրոնց նախատիպերը: Դա է պատճառը, որ բոլոր այդ կերպարները այդքան համոզիչ ու բնական էին ստացվում:

ՀԱՐՑ – Ովքեր էին նրա ընկերները:

Ձ. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ – Արտաշեսը, չնայած տարիքային մեծ տարբե- րությանը, շատ մտերիմ էր Սերո Խանգադյանի, Համո Մահյանի, Հրաչյա Հովհաննիսյանի, Պարույր Սևակի հետ: Նրանք հաճախ էին լինում մեր տանը, և ես ու երեխաները շատ էինք ուրախանում նրանց գալով: Հաճույքով լսում էինք Խանգադյանի հետաքրքիր, կոլորիտով պատմությունները, Մահյանի իմաստուն մտքերը, Հ.Հովհաննիսյանի էմոցիոնալ, բայց խորը դատողությունները, Պարույր Սևակի բուռն, հախուռն վեճերը:

Բայց Արտաշեսը ուներ նաև իր պատանեկության ընկերները, որոնց հետ կապը երբեք չի կտրել. Նուբարը, ում հետ դեռ վաղ պատանության տարիներին հեծանվային մրցումների էր մասնակցել, տաքսու վարորդ Ջավենը և ուրիշներ: Երբ անժամանակ մահացավ Ջավենը՝ նրա հիշատակը պահելու համար Արտաշեսը իր վերջին՝ ‘Իսկ դուք որտեղ էիք’՝ վեպի հերոսին կոչեց իր ընկերոջ անուն-ազգանունով – Ջավեն Շարաֆյան:

ՀԱՐՑ – Ինչն էր ամենաշատը գնահատում մարդկանց մեջ և ինչը չէր կարողանում տանել:

Ձ. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ – Շատ էր գնահատում մարդկանց մեջ անկեղծութ- յունը և բարությունը: Տանել չէր կարողանում կեղծիքը, ստորաքարշությունը, գռեհկությունը:

ՀԱՐՑ – Հեռուստատեսությունում աշխատելը չի՞ խանգարել գրելուն: Կա՞ր մտահոգում, որ չհասցրեց իրականացնել:

Ձ. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ – Անշուշտ հեռուստատեսությունը ինչ-որ չափով խանգարում էր նրա գրական աշխատանքին, բայց լինելով շատ աշխատասեր և աշխատունակ, կարողանում էր այդ երկուսը գուցակցել:

Քալանթարյանը միայն մի անավարտ գործ ունեցավ. վերջին տարիներին մի լավ խմբի հետ ամեն շաբաթ և կիրակի գնում էին Հրազդանի ձորը, մարզվում էին, ամռանը գետում լողանում, զբոսնում: Նա սկսել էր գրել այդ մարդկանց մասին, ‘‘Ձորի մարդիկ’’ վերնագրով, ու դա միակ գործն էր, որ մնաց անավարտ: Ի դեպ, նա այն բացառիկ գրողներից էր, ով չունի չտպագրված գործ:

ՀԱՐՑ – Քալանթարյան-դրամատուրգը նույնքան արդյունավե՞տ էր աշխատում, որքան Քալանթարյան-գրողը:

Ձ. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ – Կարող եմ ասել՝ այո: Նա շատ պիեսներ է գրել, որոնք բեմադրվել են Երևանի /Գ. Սունդուկյանի, Հ.Պարոնյանի անվան կոմեդիայի/, Գյումրիի թատրոններում, նաև Թբիլիսիում, Քուրթախիում, Ռոստովում, Խարկովում, Ավստրալիայում, ինչպես նաև Հայաստանի տարբեր մարզերում և քաղաքներում: Եղել են հեռուստատեսային և ռադիոբեմադրություններ:

ՀԱՐՑ – Արտաշես Քալանթարյանի կյանքում ինչն էր առաջնայինը – աշխատանքը, ընկերները, ընտանիքը, թե՞ մի այլ բան:

Ջ. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ – Նա ամեն ինչի և բոլորի համար ժամանակ գտնում էր, բայց ամենից ավելի կապված էր ընտանիքի հետ: Անչափ սիրում էր իր երեխաներին ու հատկապես թոռներին: Աշխատում էր, որ բոլորս միշտ միասին լինենք: Նույնիսկ երբ մենք Հայաստանից դուրս, առողջարան էինք գնում բուժման, նա մոտակայքում տուն էր վարձում և կանչում երեխաներին: Առանց երեխաների նրա համար դժվար էր ու ձանձրալի:

Սեպտեմբեր, 2013